

ԲԱՐԴ ԱՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԽՆԴՐԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԲԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախադասությունը, որպես շարահյուսական միավոր, հայ քերականագիտության մեջ գիտական ուսումնասիրման նյութ է դարձել միայն 19-րդ դ. 2-րդ կեսին, երբ Ա. Այտնյանը և Ստ. Պալասանյանը դրեցին աշխարհաբարի քերականության հիմքերը: Այդ շրջանում լեզվական այլ երևույթների շարքում որոշակի հետաքրքրություն առաջացավ նաև խոսքի ամենափոքր միավորի նկատմամբ: Սակայն դեռևս չկար ուսումնասիրությունների բավարար պաշար, որ նախադասությունը դիտվեր քերականագիտության ինքնուրույն բնագավառ, դառնար գիտական հետազոտման առանձին նյութ: Այն սուկ օժանդակ միջոց էր՝ լեզվի այլ մակարդակների՝ հատկապես ձևաբանության ուսումնասիրման համար:

Ստ. Պալասանյանը նախադասությունն ուսումնասիրում է իբրև լեզվական երևույթ նախ գրաբարի համակարգում («Գործնական քերականութիւն հայերէն լեզուի» (1869)), ապա, ավելի ուշ, աշխարհաբարի լեզվական կառույցներում: Համառոտակիորեն անդրադառնալով բարդ նախադասությանը՝ նա հիմք է ընդունում ռուս քերականների տեսությունները և առանձնացնում նախադասության 2 տեսակ՝ *կախյալ* և *անկախ*: Ստ. Պալասանյանը չի տալիս բարդ ստորադասական նախադասության ամբողջական սահմանումը, այլ միանգամից «Կապակցութիւն նախադասութիւնների»¹ գլխում ներկայացնում է երկրորդական նախադասությունների՝ գլխավորին կապակցման ձևերը՝ *ենթակա*, *հատկացուցիչ*, *լրացուցիչ* և *պարագայական*: Բարդ նախադասության մասերի միջև գոյություն ունեցող իմաստային փոխհարաբերությունները նրա քննարկման տիրույթից դուրս են մնում:

Ստորադասություն տերմինը առաջին անգամ գործածում է **Ստ. Մախասյանցը**: «Գրաբարի համաձայնություն» (1892 թ.) աշխատության մեջ, «բաղադրյալ» (=բարդ) նախադասության մեջ նշելով կապակցման երկու ձևեր՝ «համադրություն զուգադրությամբ» և «համադրություն կախման ձևով», առանձնացնում է դրանց կազմության երկու եղանակ՝ *ստորադասական* և *շարադրական*: Այս եզրերը նա առաջարկում է ռուսերենի բառացի թարգմանությամբ (подчинение и сочинение): Փաստորեն, Ստ. Մախասյանցը հայ քերականներից առաջինն էր, որ որոշակի տեղ էր տալիս բարդ նախադասության մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերություններին:

«Հայոց աշխարհաբար լեզվի համառոտ համաձայնություն» (1911) աշխատության մեջ բարդ նախադասությունների բաղադրիչների կապակցության ձևերի մասին իր տեսակետն է շարադրում նաև **Հար. Թումանյանը**: Նա տար-

¹ Ս. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1884, էջ 39:

բերակում է դրանց երկու տեսակ՝ ստորադասական և շարադրական: Ստորադասական կապակցություններում թվարկում է երկրորդական նախադասությունների գրեթե մույն կապակցությունները, ինչ հանդիպում ենք Ս. Պալասանյանի աշխատության մեջ: Դրանք են՝ *ենթակա, ստորոգյալ, հատկացուցիչ, լրացուցիչ, պարագայական երկրորդական նախադասություններ*:

Հայ լեզվաբանության մեջ նախադասության որպես շարահյուսության առանձին նյութի ուսումնասիրման գիտական հիմքն ու հետագա զարգացումը կապվում է Մ. Աբեղյանի անվան հետ: Իր «Աշխարհաբարի շարահյուսություն» (1912 թ.) աշխատության մեջ նա հանգամանորեն քննարկում է բարդ «խոսքերը» (=նախադասությունները), անդրադառնում դրանց կառուցվածքային, իմաստաբանական առանձնահատկություններին, կապակցման միջոցներին: Վեր հանելով դրանցում առկա պարզ նախադասությունների միջև գործող հարաբերությունները՝ նա առաջարկում է *համադասություն* ու *ստորադասություն* հասկացությունները, որոնք որպես հաջողված եզրեր մինչև այժմ էլ կիրառվում են հայ քերականագիտության մեջ:

Մ. Աբեղյանի աշխատության «Ստորադասություն և համադասություն» բաժնում արդեն փորձ է արվում տալ բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ մասերի իմաստային սահմանումը. «Լրացում դարձող խոսքը կոչվում է *ստորադաս* կամ *երկրորդական խոսք*. իսկ այն խոսքը, որի լրացումն է դառնում երկրորդական խոսքը, ասվում է *գերադաս* կամ *գլխավոր խոսք*»²:

Ես «երկրորդական խոսքերը» տեսակավորում է երեք տեսանկյունից՝

1) կառուցվածքային, այսինքն՝ գլխավոր նախադասության նկատմամբ ունեցած շարադասությամբ (առաջադաս, միջադաս, վերջադաս),

2) շարահյուսական, այսինքն՝ գլխավոր նախադասությանը լրացնող շարահյուսական պաշտոնով (ենթակա խոսք, ստորոգյալ խոսք, խնդիր խոսք, պարագայական խոսք),

3) ծնաբանական, այսինքն՝ գլխավոր նախադասությանը լրացնող խոսքիմասային արժեքով (գոյական խոսք, ածական խոսք, մակբայական խոսք):

Ինչպես վկայում է հայերենի արդի քերականագիտությունը, ստորադաս նախադասությունների բնութագրման հետագա զարգացումը չընթացավ վերոնշյալ բաժանման 3-րդ տեսանկյունով. երկրորդական նախադասության ծնաբանական տեսակավորումը ընդունված է ռուս քերականագիտության մեջ, սակայն մեզանում այն այդպես էլ մնաց զուտ որպես մասնավոր տեսություն:

Հայերենի քերականագիտության մեջ Մ. Աբեղյանը նաև առաջինն էր, որ, առանձնահատուկ նշանակություն տալով բարդ նախադասության մասերի կապակցման ձևերին, սահմանեց ստորադաս նախադասությունների՝ գերադասին կապակցվելու երկու եղանակ՝ *շարահարություն* և *զոդված*: Շարահարությամբ կապակցված երկրորդական նախադասությունները «սկզբնապես գլխավորից անկախ խոսքեր են, առանց որևէ կապակցական բառի, նշա-

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 600:

նակությամբ միայն միանում են գլխավոր խոսքի հետ»³։ Զոդվածով կապակցված երկրորդական խոսքերը գլխավորին միանում են որևէ կապակցական բառով (ստորադասական շաղկապ, հարաբերական բառ)։

Հայ շարահյուսագիտության մեջ նախադասությունների վերլուծական արդի համակարգի ստեղծման գործընթացում այս տեսակետը ևս որոշիչ դեր խաղաց։

Աբեղյանական շարահյուսության անմիջական հետևորդը դարձավ **Գուրգեն Սևակը**, որն այն համակարգեց ու մշակեց՝ որպես դիդակտիկ լեզվաբանության նյութ՝ դպրոցական ծրագրի շրջանակում։ Շուրջ հինգ տասնամյակ նրա «Հայոց լեզվի շարահյուսություն» (1934) դասագիրքը ծառայեց իր նպատակին՝ դպրոցականներին տալով շարահյուսության մասին պարզ ու մատչելի գիտելիքներ։ Սակայն, ցավոք, խոշոր լեզվաբանն այլևս չհիործեց խորանալ այս բնագավառում։

Հայերենի շարահյուսագիտությունը վերելք ապրեց միայն 20–րդ դարի 2–րդ կեսին։ Շարահյուսության արեղյանական տեսությունը այն հենասյունն էր, որի շուրջ կարելի էր կառուցել այդ գիտության բազմաճյուղ վերնաշենքը։ Ի վերջո, քերականագիտության այս ճյուղը հարստացավ տարաբնույթ ուսումնասիրությունների մեծ պաշարով, և սկսվեց շարահյուսության բաժնի գիտական «հաղթարշավը», հրատարակվեցին բազմաթիվ գիտական հոդվածներ, մենագրություններ, աշխատություններ, դասագրքեր և բուհական ձեռնարկներ։ Շարահյուսագիտության մեջ դեռևս կային լուսաբանման կարոտ բաժիններ, ճյուղեր, որոնք պահանջում էին արդի լեզվամտածողությանը համապատասխան գիտական վերլուծություն։ Դրանցից ամենածանրակշիռը բարդ նախադասությունն էր, որը լինելով շարահյուսության ամենահետաքրքիր ու տարրդուրանկ հասկացություններից մեկը, դարձավ բուռն քննարկման առարկա։ Առանձնապես տարածայնություններ կային բարդ ստորադասական նախադասության՝ որպես քերականական գիտակարգի սահմանման շուրջ։

Այդ շրջանի բարդ նախադասությանը վերաբերող արժեքավոր աշխատանքներց էր **Ն. Պառնասյանի** «Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» (1961) մենագրությունը, որտեղ հեղինակը գիտական մեծ բարեխղճությամբ քննում է ստորադասական կապակցությունները՝ բացահայտելով դրանց ձևախմբաստային բազմաթիվ դրսևորումներ։

Ն. Պառնասյանը, հիմք ընդունելով բարդ նախադասությունների մասերի միջև եղած շարահյուսական կախվածության արեղյանական ժառանգությունը, խորացնում է այն՝ վերլուծաբար ապացուցելով, որ դրանց կապակցության միջոցները՝ շաղկապներն ու հարաբերական բառերը, «հնարավորություն են տալիս արտահայտելու իմաստային բազմատեսակ հարաբերություններ...»⁴։

Ն. Պառնասյանի աշխատության մեջ քննվում են համադասությունն ու ստորադասությունն արտահայտող նաև այնպիսի միջոցներ, ինչպիսին են՝ բառերի, նախադասությունների դասավորությունը, եղանակավորող բառերի օգտագործումը, բայերի եղանակների ու ժամանակների համաձայնությունը, հնչերանգը և այլն։ Նա գտնում է, որ «երկրորդական նախադասություններն

³ Նույն տեղում էջ 609։

⁴ Ն. Պառնասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում։ Եր., 1961, էջ 190։

ուսումնասիրելիս և նրանց դասակարգումը կատարելիս պետք է հիմք ընդունել ոչ թե նրանց արտաքին կողմը, այս կամ այն ձևական հատկանիշի առկայությունը, այլ նրանց արտահայտած իմաստը ամբողջ բարդ ստորադասական նախադասության մեջ, նրանց կատարած շարահյուսական դերը»³:

Ըստ իմաստային այդ տարաբնույթ փոխհարաբերությունների էլ Ն. Պառնասյանը երկրորդական նախադասությունները բաժանում է ենթատեսակների՝ *ենթակա, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, ստորոգծելիական, խնդիր, պարագա, ամբողջ գլխավոր նախադասությանը լրացնող*:

Ջարգացնելով նաև երկրորդական նախադասության շարահյուսական բնութագրման արելյանական տեսակետը՝ Ն. Պառնասյանը փորձում է ավելի մանրամասնել և հստակեցնել այն՝ ստորադասական հարաբերության մեջ կարևորելով և՛ իմաստային, և՛ կառուցվածքային առանձնահատկությունները:

Բարդ նախադասությունների խնդրային ստորադաս բաղադրիչի մասին **Ն. Պառնասյանն** իր աշխատության «խնդիր երկրորդական նախադասությունները և նրանց կապակցությունը» բաժնում շեշտում է, որ խնդրի շարահյուսական պաշտոն կատարող երկրորդական նախադասությունը ցայտուն կերպով տեսանելի է դարձնում բարդ նախադասության մասերի միջև եղած ստորադասական հարաբերությունը և արտահայտում է գլխավոր նախադասության գործողության հետ կապված որևէ երևույթ կամ եղելություն: Հեղինակը, ըստ երկրորդական նախադասությունների բնույթի, տարբերակում է խնդրի երկու տարատեսակ՝ *ուղիղ և անուղղակի*, իսկ ըստ իրենց կատարած շարահյուսական պաշտոնի առանձնացնում է *հանգման, անջատման, միջոցի, վերաբերության անուղղակի խնդիր* երկրորդական նախադասությունները:

Ն. Պառնասյանի աշխատությունը, որպես արելյանական տեսության հիմքի վրա կառուցված բարդ նախադասությունների ստորադասական հարաբերության ձևաիմաստային մեկնաբանման հաջողված փորձ, իր ժամանակին բնություն բռնեց հայ քերականագիտության մեջ և ունեցավ հետևորդներ:

Հայերենի շարահյուսագիտության զարգացման գործում իր ներդրումն ունեցավ նաև **Վ. Առաքելյանը**: «Հայերենի շարահյուսություն» երկատորյա աշխատության մեջ (հ. Ա, 1958, հ. Բ, 1964), շարունակաբար զարգացնելով իր նախորդների ձեռքբերումները, նա շարադրում է նախադասության գիտական մեկնաբանման նոր տեսակետներ, բացահայտում դրա անդամների մեջ գործող ձևային և իմաստային նոր օրինաչափություններ:

Հիշյալ մենագրության 2-րդ հատորում, թերի, միակազմ նախադասությունների, շարահարության, ուրիշի խոսքի և քերականական մի շարք այլ գիտակարգերի թվում, լեզվաբանը անդրադառնում է նաև բարդ նախադասությանը՝ առանձնապես կարևորելով նրանում առկա պարզ նախադասությունների **իմաստային և հնչերանգային ամբողջությունը**: Վ. Առաքելյանը նկատում է, որ այդ նախադասությունները «որոշ կողմերով այլևս այն չեն, ինչ դրանք ներկայացնում են բարդությունից դուրս»⁴: Բարդ ստորադասական նախադասության ձևակերպման մեջ նա առաջնահերթ է համարում նախ կապակցման միջոցների՝ ստորադասական շաղկապների, հարաբերական դերանունների և

³ Նույն տեղում էջ 18:

⁴ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն: հ. Բ, Ե., 1964, էջ 82:

շաղկապային բառերի առկայությունը, ապա նոր միայն նախադասություններին մեկի՝ մյուսին ստորադասավելու իմաստային հարաբերությունը: «Գլխավոր և երկրորդական հասկացությունները սոսկ կառուցվածքային և գործառական արժեք ունեն: Շարահյուսական տեսանկյունից ոչ մի նշանակություն չունի, քե բարդության հիմնական իմաստը կամ միտքը որի մեջ է ամփոփված»⁷, գտնում է Վ. Առաքելյանը: Ելակետ ունենալով այս դրույթը՝ նա նշում է, որ երկրորդական նախադասությունները պետք է քննել «ըստ նրանց կիրառական պաշտոնի», և ըստ այդմ էլ առաջարկում է դրանք բաժանել երեք խմբի՝

1) գլխավոր նախադասության մեջ պակասող կամ ձևական ենթակային ու ստորոգյալին փոխարինողներ՝ *ենթակա և վերադիր*,

2) գլխավոր նախադասության ենթակային կամ որևէ գոյական անդամին լրացնողներ՝ *որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ*,

3) գլխավոր նախադասության ստորոգյալին կամ որևէ բայական անդամին լրացնողներ՝ *խնդիրներ և պարագաներ*:

Վ. Առաքելյանը խնդիր երկրորդական նախադասությունների տեսակավորումը անմիջականորեն կապում է բայի քերականական սեռի հետ. «Եթե երկրորդական նախադասությունը խնդիր է ներգործական սեռի բայ-ստորոգյալի համար, ուրեմն ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն է, իսկ եթե չեզոք կամ կրավորական բայի պահանջով է կիրառվում, դառնում է անուղղակի խնդիր»⁸: Վերջիններս էլ նա համակարգում է հետևյալ տեսակներով. *մատուցման, հանգման, ստացական, միջոցի, անջատման, ապա շահի, ներքին ձգտում, հոգեկան որոշ տրամադրություն, համոզմունք, հույս հավատ և այլն արտահայտող բայ-ստորոգյալի հետ կապված անուղղակի խնդիրներ*: Երկրորդական նախադասությունների այս և մյուս տեսակները ներկայացվում է՝ ելակետ ունենալով միայն բարդ նախադասության կապակցման միջոցները, դրանց ձևաիմաստային նրբերանգները:

Վերը նշված աշխատությունների հեղինակները, կենտրոնանալով հատկապես բարդ ստորադասական նախադասության կապակցման միջոցների վրա, գիտական ուսումնասիրության նյութ էին դարձրել դրա միայն *զոդվածական* տեսակները: Մինչդեռ գեղարվեստական խոսքում իրենց ծանրակշիռ տեղն ունեին նաև խոսակցական լեզվից եկած անշաղկապ կամ *շարահարական* կառույցները, որոնք ուսումնասիրման հարուստ նյութ էին պարունակում:

Այս առումով հայ շարահյուսագիտության մեջ գիտական արժեքավոր ներդրում էր Արտ. Պապոյանի «Կախյալ շարահարությանը բարդ նախադասությունները արդի հայերենում» (1968) աշխատությունը:

Հիշյալ ուսումնասիրության ներածական խոսքում, համակարգելով և արժեքավորելով շարահյուսագիտության բնագավառի հայ երախտավորների ձեռքբերումները, քննարկելով ռուս լեզվաբաններ Ա. Մ. Պեշկովսկու, Վ. Ն. Պետերսոնի, Վ. Վ. Կիմոգորոդովի՝ շարահարական կապակցությանը բարդ նախադասություններում ստորադասական հարաբերության առկայությունը հաստատող կամ մերժող տեսությունները, ինչպես նաև անդրադառնալով հայ քերականագիտության պատմության մեջ այդ հարցի տարաբնույթ դրսևորումներին՝ Արտ.

⁷ Նույն տեղում էջ 91:

⁸ Նույն տեղում էջ 157:

Պապոյանը գտնում է, որ «շարահարությանը բարդ ստորադասական նախադասությունների մեջ առավելագույն չափով դրսևորվում է շարահյուսական և ձևաբանական կարգերի ու օրինաչափությունների քերականական կապ»⁹:

Շարահարական կապակցությունը տարածվում է բարդ ստորադասական նախադասությունների բոլոր այն տեսակների վրա, որոնք չունեն կապակցող բառ լինի վերջինս շաղկապ, թե հարաբերական բառ, միաժամանակ լինի այդ անշաղկապությունը շաղկապի գեղջում, թե իսպառ բացակայություն: Լեզվաբանը նշում է, որ նշված նախադասությունները մի շարք դեպքերում ունեն ոճական արժեք խոսքը դարձնում են «հակիրճ, սլացիկ ու դիպուկ, ուրեմն և առավել կենդանի ու ներգործող» և բազմաթիվ օրինակներով հաստատում է դրանց լայն կիրառությունը գեղարվեստական խոսքում՝ մանրակրկիտ կերպով քննարկելով դրանց ձևախմբաստային նրբերանգները:

Բարդ ստորադասական նախադասության կառուցվածքային առանձնահատկություններին, դրանց բաղադրիչների փոխհարաբերություններին է նվիրված նաև **Բ. Վերդյանի** «Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն» (1970) աշխատությունը, որտեղ, նշելով նախադասության այդ տեսակի ամմասնատելի, դիալեկտիկական ամբողջություն լինելը, հեղինակը գտնում է, որ երկրորդական նախադասությունը *պատճառական հիմունքն է*, իսկ գլխավորը՝ *հետևանքը*, և վերջինս հաճախ ձևական բնույթ է կրում, իմաստային էական նշանակություն չունի: Մինչդեռ խնդիր երկրորդական նախադասությունները տեսակավորելու հարցում լեզվաբանն առաջնորդվում է հայ շարահյուսագիտության մեջ ընդունված ավանդներով. առաջարկում է դրանց երկու մեծ բաժանում՝ *ուղիղ և անուղղակի* խնդիրներ, իսկ անուղղակի խնդրի մեջ՝ *հանգման, մատուցման, վերաբերության, անջատման, միջոցի, ներգործող* տեսակները:

20-րդ դարավերջին իրենց հրապարակած լեզվագիտական նյութերում ստորադասական նախադասություններին վերաբերող արժեքավոր մեկնաբանություններով և հայեցակարգային տարբերակներով են հանդես գալիս նաև Ս. Աբրահամյանը, Գ. Գաբրելյանը, Չ. Ալեքսանյանը և ուրիշներ:

«Հայոց լեզու: Շարահյուսություն» (2004) բուհական ձեռնարկում, ուր ի մի է բերված **Ս. Աբրահամյանի** լեզվագիտական ժառանգությունը, մեզ հետաքրքրող թեմայի՝ բարդ ստորադասական նախադասության մասին հանդիպում ենք հետևյալ մեկնաբանությանը:

Շարահյուսական այդ կառույցի սահմանման մեջ նա ևս շեշտում է ստորադասական հարաբերությունը, դրա կապակցման ձևերի ու միջոցների հարցում հետևում է արեղյանական տեսակետին, սակայն *զոդված* տերմինի փոխարեն առաջարկում է *բառական* ձևը, որի միջոցներն է համարում շաղկապները, շաղկապական բառերը (հարաբերականներ), հարաբերյալները: *Շարահարական* եղանակով կապակցություններում իր նախորդներին պես նա ևս կարևորում է հնչեղանգը և քերականական արժեք ունեցող դադարը (տրոհումը):

Նորովի է Ս. Աբրահամյանի մոտեցումը երկրորդական նախադասությունների տեսակավորման խնդրում: Նա ստորադաս նախադասությունները ենթարկում է նախնական խմբավորման.

⁹ Նույն տեղում էջ 49:

«...ա) գլխավոր անդամներին համապատասխանող երկրորդական նախադասություններ.

բ) երկրորդական անդամներին համապատասխանող երկրորդական նախադասություններ՝ իրենց 2 ենթատեսակով՝

1) գոյականական անդամի լրացում նախադասություններ,

2) բայական անդամի լրացում նախադասություններ,

գ) ամբողջ գլխավոր նախադասությամբ լրացնող երկրորդական նախադասություններ»¹⁰:

Ահա այս դիտակետից էլ նա որոշում է երկրորդական նախադասության բնույթը կամ ավելի ստույգ դիտակետից, իր ձևակերպմամբ՝ «ստորադասական նախադասության կապակցությունը»: Մեր խնդրո առարկա խնդիր երկրորդական նախադասությունները մտնում են վերոնշյալ /բ)/ խմբի /2)/ ենթատեսակի մեջ, այսինքն՝ երկրորդական անդամներին համապատասխանող երկրորդական նախադասություններ խմբի բայական անդամի լրացում նախադասություններ ենթատեսակի մեջ: Ստորադաս նախադասությամբ այդ կապակցություններն են ուղիղ խնդիր, հանգման խնդիր, անջատման խնդիր, միջոցի խնդիր, ներգործող խնդիր, վերաբերության խնդիր, մասնավորման (սահմանափակման) խնդիր: Փաստորեն, Ս. Աբրահամյանը, ցանկանալով շեշտել բարդ ստորադասական նախադասության իմաստային կողմը՝ ստորադասական հարաբերությունը, տեսակավորում է ոչ միայն ստորադաս նախադասությունը, այլ նաև տվյալ ստորադաս նախադասությամբ ողջ կապակցությունը:

Ա. Պապոյանի և Խ. Բաղիկյանի համահեղինակությամբ 2003 թ. հրատարակված «ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» ուսումնական ձեռնարկի 2-րդ բաժնում (հեղ.՝ Արտ. Պապոյան) արդեն բարդ նախադասությունը, դրա տեսակները, դրանում գործող քերականական հարաբերությունները լուսաբանվում են գիտական համակարգման մեթոդով: Բարդ ստորադասական նախադասության սահմանումը հակիրճ է, բայց իմաստային առումով պերճախոս. «Բարդ ստորադասական կոչվում է այն նախադասությունը, որի բաղադրիչները քերականորեն անհամարժեք են. մեկը լրացում է, մյուսը՝ լրացյալ»¹¹: Խոսելով բարդ ստորադասական նախադասության կառուցվածքային հատկանիշների մասին՝ հեղինակը նախ նշում է, որ դրա «շարահյուսական նվազագույն արտահայտությունը երկբաղադրիչ կառույցն է»¹²: Այս, ելնելով այդ տեսանկյունից, ստորադասական հարաբերությունը բնութագրում է որպես բաղադրիչների միջև գործող շարահյուսական կարգ, որն ունի բովանդակության և արտահայտության հակադրամիասնություն, ուր «բովանդակությունը 2 բաղադրիչներից մեկի շարահյուսական իշխողականությունն է (դոմինացիան), ի հակակշիռ մյուսի. որը իշխողի (դոմինանտի) հանդեպ գտնվում է շարահյուսորեն *կախյալ* վիճակում. դա իշխվողն է», իսկ «արտահայտությունը իշխողի և իշխվողի շարահյուսական հարաբերության դրսևորման ձևն է, այսինքն՝ բաղադրիչների կապակցության եղանակներն ու միջոցները, ձևակազմությունը՝ իր ընդհանուր ամբողջության մեջ»¹³:

¹⁰ Ս. Աբրահամյան, Հայոց լեզու: Շարահյուսություն, Ե., 2004, էջ 146:

¹¹ Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 216:

¹² Երևան տեղում: էջ 274:

¹³ Երևան տեղում:

Այնուհետև հեղինակը նշում է, որ գլխավոր և երկրորդական նախադասություն հասկացություններն ունեն միայն կարգային իմաստ, որով էլ պայմանավորվում է նրանց շարահյուսական դերը բարդ նախադասության կառույցում: Առաջել կարևորվում է երկրորդական նախադասության իմաստային-լրացական տարրեր հարաբերություններով քերականական կախվածությունը գլխավորից:

Ա. Պապոյանը համակարգում է նաև բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցման եղանակները: Եթե նրա նախորդներն այդ հարցում տարածայնությունների մեջ էին՝ առաջարկելով «շաղկապավոր», «հարաբերական բառերով», «անշաղկապ», «բառական» և նման այլ տարբերակումներ, ապա Ա. Պապոյանը գտնում է այդ բոլոր առաջարկությունները համխմբող միասնական բնութագիր՝ «բարդ ստորադասական նախադասության բաղադրիչների կապակցությունը իրականացվում է 2 եղանակով՝ ա) սպասարկու բառերով և բ) առանց սպասարկու բառերի: Սպասարկու բառերով կապակցությունը ... կոչվում է *նշույթավոր* կամ *գողվածական*, առանց սպասարկու բառերի կապակցությունը՝ *աննշույթ* կամ *շարահարական*»¹⁴:

Յիշյալ ձեռնարկում, գիտականորեն համակարգելով հայ քերականագիտության մեջ եղած տարբեր տեսակետները, սահմանվում է, որ «խնդրային կախյալ նախադասությունները վերառված կերպով նշում են մի գործողություն, իր, իրողություն, երևույթ, որոնք իրենց այս կամ այն գործառույթով մտնում են գերադաս բաղադրիչի բայական անդամի արտահայտած գործողության ծիրի մեջ»¹⁵: Ապա ասվում է, որ դրանք «հանդես են գալիս կամ որպես *բայասեռի*, կամ որպես *բայիմաստի* լրացումներ: Բայասեռի լրացումները առնչվում են *ներգործական* և *կրավորական* սեռերին: Ներգործական սեռի խնդիր է *ուղիղ խնդիրը*, կրավորական սեռի խնդիր է *ներգործման խնդիրը*: Մյուս խնդիրներն առնելու ունակության տեսակետից բայի սեռը չեզոքացվում է, և կարևորվում է ու վճռական դառնում *բայիմաստը*»¹⁶: «Մյուս» խնդիրները խմբավորված են *բայիմաստի (բնության) խնդիրների* մեջ՝ որպես *հանգման, անջատման, միջոցի, վերաբերության անուղղակի խնդիրներ*:

Վերը շարադրածից կարող ենք եզրակացնել, որ ժամանակակից հայերենի շարահյուսությունը 20-րդ դարի 60-ական թվականներից դառնում է քերականության ամենաշատ հետազոտվող գիտակարգերից մեկը: Յուրաքանչյուր նոր խոսք իր հետ բերում է նոր հարցադրումներ: Ջարգացող «կենդանի» խոսքը, անխտապիելիորեն անդրադառնալով նաև գրավոր խոսքի վրա, առաջարկում է լեզվամտածողության նոր, գիտական վերլուծություն պահանջող ձևեր, խոսքի քննության նոր մոտեցումներ, լեզվական կաղապարների հետազոտման նոր դիտակետեր: Չայ քերականագետներն իրենց աշխատություններով քայլ առ քայլ առաջ են մղում հայերենի շարահյուսագիտությունը, ապահովում այդ գիտաճյուղի զարգացման լայն հեռանկար:

Այս ամենից անմասն չէր կարող մնալ նաև շարահյուսագիտության ամենահետաքրքիր, մշտապես լեզվական անակնկալներ պարունակող բաժինը՝ բարդ նախադասությունը և, առավել ևս, բարդ ստորադասական նախադասությունը: Վերջինիս շուրջ հրապարակված տեսակետներն առանձնանում են երբեմն ավանդապահությամբ, երբեմն բանավիճային ու հետաքրքիր նորարարությամբ: Այն լայն

¹⁴ Նույն տեղում էջ 276:

¹⁵ Նույն տեղում էջ 312:

¹⁶ Նույն տեղում էջ 313:

քննարկման նյութ է դառնում և՛ ընդհանուր լեզվաբանության մեջ՝ որպես քերականական գիտակարգ, և՛ շարահյուսության համակարգում՝ որպես առանձին բաժին: Այս լեզվական երևույթին սկսում են անդրադառնալ թե՛ ընդհանուր լեզվագիտական խնդիրներին առնչվող մենագրություններում, թե՛ հայերենի շարահյուսությունը լուսաբանող մենագրություններում ու գիտական հոդվածներում:

21-րդ դարասկզբին արդեն հրապարակված լեզվագիտական նյութերում, ի մի է բերվում բարդ ստորադասական նախադասությանը վերաբերող անցյալի ժառանգությունը, ներկայացվում են դրա առավել հստակ ու համակարգված վերլուծական կաղապարներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Ս., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:
2. Աբրահամյան Ա., Հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., 2004, էջ 146:
3. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, Կ. Բ, Եր., 1984:
4. Պալասանեան Ա., Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1884:
5. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:
6. Պառնասյան Ն., Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Եր., 1961:

Л. АЙРАПЕТЯН

ИССЛЕДОВАНИЯ СЛОЖНОПОДЧИНЕННЫХ ПРЕДЛОЖЕНИЙ И ИХ ОБЪЕКТИВНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ В АРМЯНСКОЙ ГРАММАТИЧЕСКОЙ УЧЕНИИ

Предложение как синтаксическая единица стало объектом изучения в армянском грамматическом учении только во второй половине 19-го века. Тезисы опубликованные о сложноподчиненных предложениях, отличаются либо традиционностью, либо полемичными и интересными новшествами. В конце концов оно становится темой широких дискуссий.

В начале XXI века в опубликованных материалах обобщается все наследие прошлого, касающееся сложноподчиненных предложений, и приводятся более четкие и систематизированные модели.

L. HAYRAPETIAN

THE STUDIES OF COMPLEX SENTENCES AND OBJECT CLAUSES IN THE ARMENIAN GRAMMAR SYSTEM

The sentence as a grammatical unit became a matter of investigation in the second half of the 19th century.

The composite sentence, especially the complex sentence, is considered to be the most interesting aspect of syntax. The grammatical characteristics, clauses, the points about the types of the latter are either traditional or innovative. Eventually complex sentences became a matter of wide discussions in both general linguistics and syntax.

At the beginning of the 21st century the whole studies were summed up, clarified and systematized in publications.